

րագաւք թագաւորն, եւ հրովարտակաւք եւ ճոխ իշխանաւքն որ ընդ նմա առաքեցանս, մեծ զաւրավարն Յայոց՝ որում անուն էր Վասակ, ի Մամիկոնեան տոհմէն. եւ Մեհենդակ Ըռըշտունի, եւ Անդովկ Սիւնի, եւ Արշաւիր Կամսարական, մեծք եւ գլխաւորք նահապետք. եւ տասն այլ այլ, արք պատուականք, առին զնացին զՓառէն սուրբ ի մայրաքաղաքն Գամրաց ի Կեսարիա, եւ անդ ձեռնադրեցին զնա ի կաթողիկոսութիւն Յայոց մեծաց: 4 Եւ զան դարձեալ յիւրեանց աշխարհն խաղաղութեամբ:

5 Եւ նստաւ Փառէն յաթոռ հայրապետական սակաւ ժամանակս. եւ այլ ինչ չհամարձակեր նա կամ խրատել ինչ, կամ յանդիմանել զմիջոցութիւն ինչ զուրուք կամ զամբարշտութիւնս: 6 Բայց միայն զիւր անձն սուրբ պահեր, եւ ի հարկէ ընգերեր անաւրէն թագաւորին, եւ ըստ նորին կամացն երթեալ հնազանդեալ: 7 Եւ յետ այսորիկ հանգեաւ, եւ յաւելաւ առ հարս իւր. եւ առեալ պաշտանէիցն եկեղեցոյ բանակին զմարմինն, զնացեալք ի գաւառն Տարանոյ՝ տարան ի յագարակն մեծի մարգարեանոցին Յովհաննու, որ էր ինքն ի կենդանութեանն իւրում յառաջագոյն բնակեալ. եւ անդ գեղեցիկ շիրիմ գործեալ, եւ զսորա ոսկերս ծածկեցին:

ԳԼՈՒԽ ԺԷ.

1 Յաղագս Շահակայ՝ որ էր ի գաւակէ Աղբիանոս եպիսկոպոսի, որ յաջորդեաց զտեղի հայրապետացն աթոռոյն. եւ թէ՛ որպէս յայնմ ժամանակի երկիրն Յայոց թողեալք զՏէր եւ զպատուիրանս նորա:

2 Ապա յայնմ ժամանակի միաբան խորհեցան աշխարհաւրէն խորհուրդ, եթէ ո՛ւմ պարտ իցէ զհայրապետութեանն զկաթողիկոսութիւն ունել: 3 Ապա իբրեւ ոչ ոք գոյր ի տանէն Գրիգորի այնմ արժանի, ապա նմանեցուցին զՇահակ ոմն անուն ի տոհմէ գաւակին Աղբիանոս եպիսկոպոսին: 4 Եւ տան զնա ի ձեռս իշխանին մարդպետութեանն, որում անուն իւր Յայր կոչէր. եւ յաւագաց գումարէն ընդ նմա զիշխանն Գարդմանաց ձորոյն. եւ առնէն ընդ նոսա այլ տասն նախարարս. եւ յուղարկեցին զնա մեծաշուք պատուով յերկիրն Գամրաց ի մեծ քաղաքն Կեսարիա: 5 Անդ ձեռնադրեն զՇահակն ի կաթողիկոսութիւն Յայոց մեծաց, եւ պատուով դառնան առ թագաւորն:

6 Եւ յաջորդեաց զտեղի հայրապետացն Շահակն. եւ սա նմանեաց վարուցն Փառէնայ: 7 Առաջնորդէր սա աշխարհի ըստ նմին արինակի: 8 Բայց որոց հովուէրն՝ չեղեալք ունկն ինչ խրատու ճշմարտութեանն, այլ յանդիմանեալք՝ հովանեալ գործէին զմեղս համարձակութեամբ, առանց խիթի յամենայն չարիս դարձեալք, թողեալք զՏէր եւ զպատուիրանս նորա առ հասարակ թագաւորն եւ նախարարքն եւ իշխանքն: 9 Եւս չար քան զնոսա առ մարդիկ մարդկանն ամբարշտեալք, ի հնութիւն առաջին գործոցն հարցն իւ-